

իրենց աշխատութեան պտուղը չվայելին՝ աշխատութիւն ընելէ կը դադրէին :

— Բայց ասիկա, հարցուց լէսնարտոս, մարդուս անձնասիրութեան ըզդացմունքը զրգուել ըսել չէ :

— Լէսնարտ, միշտ անձնասիրութիւն մի անուաներ մարդուս այս զդացմունքն որ ունի ծառայել արդար վարձուց հատուցմամբ : Անձնասիր ուրեմն պէտք է ըսել քեզի՝ աշխատութեանդ փոխարէնը վճարել տալուդ համար : Պարսաւելի անձնասիր է մէկն երր զայլս յանիրաւի իրեն կրիցը կը զոհէ, կամ նախանձու աչքով կը տեսնէ ուրիշներուն իրմէ աւելի ունեցածը : Միթէ արժան և իրաւ չէ որ ամենայն ոք իր և աշխարհք բերած որդւոցը պէտքը հոգայ : Արդ ով որ մարմնոյ կամ մոտաց աշխատութեամիք ծառայութիւն մը կ'ընէ իր երկրին և այնչափ ստակ կը թողու որ զաւկըներն անկարօտ ըլլան՝ այսպիսին կը րկին բարկք ըրած է :

Բայց բաւական չէ մարդուս իւր աշխատութեան արդիւնքը պահպանելի և վայելելը միայն՝ վասն զի այնու զմեզ աշխատութեան յորդորողը սոսկ անձնասիրութիւնը կ'ըլլար, ինչպէս քիչ մ'առաջ կ'ըսէիր . պէտք է որ մարդու կարենայ իւր շահածը մահուրնէն ետքը ուրիշի ժառանգութիւն ձգել . ասիկա սոսկ կերպ մի է ազատութեան՝ զոր ունինք մեզի վերաբերեալ բանը շնորհելու . այս ազատութիւնը բանեցնելը մեր կենացը վերջին դործը կ'ըլլայ : Ասոր համար է որ ամենայն կիրթ ազգաց մէջ՝ ընկերութիւնը քաղաքացւոց իրաւունքը կ'ապահովցնէ որ կարենան կտակաւ իրենց ստացուածոցն համար հրամայել՝ 'ի բաց առեալ քանի մը ամփոփ մունք 'ի շահ ընկերութեան կամ 'ի շահ արդարութեան և մարդկութեան :

Ընդհակառակն ուր որ քաղաքացիք չեն վայելեր ապահովութեամբ և չեն կրնար կարգաւորել ազատութեամբ իւրենց ստացուածքը՝ ընկերութիւնը տրզայութեան մէջ կը մնայ . պատմութիւնը վկայ է ըսածս հաստատելու համար,

և կը տեսնենք ստուգապէս թէ ամեն ժամանակ առաջին կարգի ծաղկեալ ազգերն անոնք եղան՝ ուր աղէկ պաշտպանեալ էր սեպհականութիւնը : Նոյն իսկ հիմակուան ժամանակս՝ որ ազգերն են Եւրոպայի մէջ մեծահարուստ և բարեկեցիկ . բայց եթէ անոնք որ մեծաւ երաշխաւորութեամբ կը հսկեն քաղաքացեաց ստացուածոց համար . ընդհակառակն տեսէք Ասիոյ այն կողմերը ուր ամենենին ապահովութիւն չիկայ և միշտ վտանգ կայ ծանր ծանր աշխատութեամբը ձեռք բերուած որ և իցէ բան կորսնցնելու . բնութեան առձեռն շուայլած ամենայն նպաստիւքն հանդերձ՝ վաճառականութիւնը մեռած է այն աեղերու մէջ, երկրագործութիւնն ու արուեստական ճարտարութիւնը միշտ ետ մնացած, ոչ ոք կը համարձակի երբեք գործոյ մը ձեռք զարնելու, վասն զի ամենենին ապահովութիւն չիկայ աշխատութեան արդիւնք քաղելու . հազիւ թէ քիչ մը ժողովուրդ կընայ ապրիլ այն երկիրներուն մէջ՝ որ կընային տասնապատիկ աւելի բնակիչ սնուցանել :

Կը շարունակոի:

Ուրեմն

## ՀԱՅԻ ՊԱՏԱՌԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

### ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՄԱՐԴ

ՆԱՄԱԿ ՔՍԱՆԵՐՈՐԴ

Բնանուխը<sup>1</sup> և բբուածինը .

(Տես Հատ. իլ. երես 364)

Ահա ուրեմն, սիրելի օրիորդիկ, հասանք մեծ խորհըրդին մեկնութեանը, որ է շնչառութեան ինչո՞ւ համարը : ինքնինքդ հաստատ բռնէ, որովհետեւ ա-

<sup>1</sup> Բնանուխը ածխին ուսումնական անունն է :

նանկ աշխարհի մը մէջ կը մտնենք՝ ուր ամեն բան քեզի նոր պիտոր երենայ :

Հոս աեղս է աճիսի վաձառանոցը, բայ քեզի ետքի անգամ, և անշուշտ կարծած պիտոր ըլլաս որ նորէն միտքս քեզի բաղդատութիւն մը ընելու է :

Բայց չէ . բաղդատութիւն մը չէ ըրածս, բուն իրական եղած բանն է . վաձառանոց մը, որովհետև առետրոյ խնդիր մըն է, փոխանակութեան գործ մըն է, ինչպէս քեզի զուրցեցի ածիսի, վասն զի իրապէս ածուխն է այդ առետրոյ էական և իրական առարկայն :

Ի՞նչ, պիտոր ըսես ինծի, իրական ածուխ . անանկ ածուխ ինչպէս է այն որով խոհակերը իր կրակարանը կը վառէ : Սակայն մենք մեր մարմնոյն մէջ անկէ չունինք . անանկ բան չենք ուտեր:

Այո, օրիսրդ, իրական ածուխ . և զու ալ կ'ուտես անկէ, չտհածիս . և ամեն օր ալ կ'ուտես . բայց ի՞նչ կ'ըսեմ, պատառ մը չես կ'ըլեր որ մէջը իր ածխի պաշարը չբովանդակէ :

Կը խնտաս, այլ քիչ մը սպասէ :

Երբ առաւօտեան կամով սրճի մէջ թաթխելու հացի կտորները կրակի վըրայ աղնձելու կը զնեն ու քիչ մը շատ կը թողուն, ի՞նչ կը հանդիպի :

— Բոլորովին կը սենան :

— Երբ մսի կողիկները երկայն ատեն կրակի վըրայ կը թողուին, ի՞նչ կ'ըլլայ :

— Բոլորովին կը սենան :

— Երբ վառարանին տախտըկին վըրայ եփուելու համար զրուած խնձորները կը մոռցուին, ի՞նչ կ'ըլլայ :

— Բոլորովին կը սենան :

— Միշտ կը սենան . անանկ չէ . և աղէկ ածխի սեռութիւն մը կ'առնուն, եթէ աղէկ դիտած ես, կատարեալ այրած քափարներու նման, կամ շատ խորոված շագանակներու պէս, և կամ կեղեած գետնախնձորներու նման՝ որ կայծականց վըրայ ձգուին :

Եւ հացի կտուր, կողիկ, խնձոր, քաքար, շագանակ, գետնախնձոր, չկայ արդեօք հասարակ անուն մը որ կարենայ բացատրել բոլոր այդ աղէկ բաներու հանդիպած դմբաղդութիւնը :

— Ահ, տէր, այո . « ահա ածուխ գարձան », կ'ըսեն :

— Ածուխ գարձան . ատոր կը սպասէի : Ահա ուրեմն ածուխ փոխուեցան : Արդ հաւանական է որ այդ ածուխը կրակարանէն ելլելով չէ մոտած կողիկներուն, շագանակներուն և միւսներուն մէջ . և հաւտա որ դեռ անոնք կրակի վրայ չդրուած՝ ածուխը մէջերնին կար : Միայն իր տգեղ սև գոյնը չէր երեցրներ, որովհետև աղէկ ընկերութեան մը հետ էր, և ուրիշներու ետելը պահուըտած կը գտնուէր, ինչպէս ասեղ մը որ ծծմբառներու տրցակի մը մէջ կորառուած ըլլայ : Ծծմբառներուն կրակ տուր, կը առեննես որ միայն ասեղը կը մնայ քեզի, և մէկէն աչքիդ կը զարնէ : Նոյնպէս հոս ալ . կրակը միւսները ջնջեր վերուցեր է, և ածուխը մինակ մնացած յարմար ժամանակի յայտնուեր է, որ գժուարահաւան պըզատի աղջիկները համոզէ, թէ իրապէս ածուխ կար այն խնձորներուն և քափարներուն մէջ, զորոնք ախորժով կ'ուտէին անշուշտ, եթէ այն չարը քիչ մը աւելի երկայն ատեն իր ընկերներուն ետելը պահուըտած մնար :

Ածուխը, սիրելի դու, շատ աւելի տարածուած մարմին մըն է քան ինչ որ մինչև հիմա հաւտալ չես ուզած : Այն որ խոհակերոցին կողովին մէջ ամփոփած կը առեննես, ծառոց փայտէն կուգայ, ուր աւելի առատ կը գտնուի քան թէ ուրիշ բաներու մէջ . սակայն, ինչ և իցէ բոյսի կամ կենդանւոյ, և ոչ ըղունգի չափ կտորիկ մը կայ որ մէջը ածուխ չբովանդակէ : Այն շաքարին մէջն ալ որ ակռայիդ տակը կը կճրտես՝ ածուխ կայ . խմած գինիիդ մէջ ալ ածուխ կայ . և նաև խմած ջրիդ մէջ ալ աղէկ փնտռելով կը նամամ՝ գտնել : Նաև սագի գրչին մէջ ալ՝ որ հիմա ձեռքսը բռնած եմ, կայ այդ ածուխէն, ինչպէս նաև այս թըղթիս մէջ որուն վըրայ կը զրեմ, և դարձեալ այս թաշկինակիս մէջ որ զրպանսէ . բաւական է որ զանոնք ճրադին մօտեցընեմ, մէկէն կը սենան և ածխին ներկայութիւնը կը մատնեն : Նաև նոյն ճը-

բագին մէջ ալ կայ, ինչպէս նաև մոմին մէջ, կանթեղի եղին մէջ, և եթէ անոնց բոցին վրայ ապակիի կտոր մը տափակ դիրքով բռնեմ, կրնամ այնչափ ածուխ հաւաքել՝ որ բաւական ըլլայ այն ոմանց քթին ծայրը սեցրնելու՝ որ դեռ ևս ատոր հաւաք ընծայել չեն ու զեր: Օդուն մէջն ալ կայ, հողուն մէջն ալ կայ. և ինչ բան կայ որուն մէջը չգտնուի: Բոլոր այն քարերը՝ որոնցմով շինուած է բարիզ քաղաքը, վերէն՝ ի վար լի են այդ ածուխով: Ածուխը այս աշխարհիս բազմաճոխ իշխաններէն մէկըն է: Իր իշխանութեան վիճակը անանկ ընդարձակ է, որ մէկը կրնայ ամբողջ երկրիս շրջանը ընել. առանց անկէ գուրս ելլելու, քան զՔարապասայ մարգիզէն ալ գերազանց:

Այս ամենէն ետքը, կը յուսամ, թէ ալ չըսես պիտի ինծի որ ածուխ չես ուտեր, մանաւանդ որ անկէ փախուստ տալ շատ դժուարին է քեզի: Մեղանի վրայ եղածներէն միայն աղամանն է՝ որուն մէջ կարելի է ածուխ չգտնել. և այդ բանն ըսելով միայն աղը կը հասկընամ, վասն զի նոյն իսկ աղամանին մէջ, որչափ ալ պայծառ ու ջինջ ըլլայ անոր բիւրեղը, միշտ մէջը ածուխ կը գտնուի:

Մեր մարմինը ուրեմն լի է ածուխով: Բոլոր մեր կերած բաներովը ահագին քանակութեամբ ածուխ մէջը կը մոնէ և մեր գործարանաց ամեն անկիւն կ'երթայ կը նատի: Այն ածուխը գլխաւոր նիւթերէն մէկն է այն ընդարձակ շէնքին ամբողջութեանը, որուն վրայ այս նամակներս սկսած ժամանակ քեզի կը խօսէի, և որուն ընդհանուր ձեռնարկուն՝ մարմնոյն վերակեցուն է, որ է արիւնը: Եթէ այն ատենուան ըաածներս աղէկ կը յիշես, այս շէնքերը ինքնիրեննուն կը կործանին՝ քանի որ գործաւորները հետզհետէ կ'աշխատին, և արիւնը որ թոքերէն ու սրտէն հասնելով նոր նիւթերը կը կրէ կը բերէ, ետ դառնալով բոլոր աւերակները կ'առնէ կը տանի: Արդ այս աւերակներուն մէջէն ամենէն շատ տեղ

բռնողը հինցած ածուխն է, ինչպէս նաև նոր նիւթոց մէջ նոր ածուխն է որ աւելի տեղ կը բռնէ: Ետ գարձող արեան գրպանները խծկած են ատով, և եթէ չանար շուտով անկէ աղատելու, աշպիտանի բան մը ընելու կարող չէր ըլլար:

Թորոց մէջն է որ անկէ կ'աղատի: Օդուն կու տայ զայն, որուն օդն աղպէտք ունի ամենահարկաւոր գործողութեան մը համար, ինչպէս քիչ մը ետքը քեզի պիտոր զուրցեմ: Անոր փոխարէն, օդն ալ անոր անհրաժեշտ բան մը կու տայ, առանց որուն արիւնը չիշխեր նորէն գործարանաց մէջ դառնալու, վասն զի անկէ զուրկ՝ իր իշխանութիւնը ճանչցող չգտնար:

Այսպէս ածխավաճառը իր ածխովը մէկտեղ վաճառանոցը կ'երթայ, և անոր փոխանակ ստակ կ'ընդունի: Եթէ առանց ստրկի տունը գառնար, իր կնիւ կը թշնամանքներով կ'ընդունէր զինքը: Սակայն այդ անհրաժեշտ բանը ո՞րն է: Այս անունը աղէկ միտք պահէ: թրուածինն է:

Յարգանօք ատոր վրայ խօսելու է, վասն զի շատ պատուաւոր ու զօրաւոր անձ մի է այս մէկը, քան զածուխն իսկ շատ գերազանց: Եթէ ածուխը աշխարհիս մեծ իշխաններէն մէկն է, թթուածինը աշխարհիս թագաւորն է:

Կայ մէկ մարմին մը, սիրելի օրիորդ, որուն անունը շատ մարդիկ չեն գիտեր, մանաւանդ պղտի աղջկանց մէջէն շատը, որ և ինքնիրեն մինակ, մեր երկրագնատին մեզի ծանօթ բաներուն կէմէն աւելին կը ձեացընէ:

Այդ մարմինը, քեզի հիմա ըսածս է, թրուածին:

Օդուն բարձրութեամբը վեր ելիր, այսինքն գետնէն տասուերկուքէն մինչեւ տասնուհինդ փարսախ բարձրութեամբ, ինչպէս ըսենք. թթուածին՝ այդ անհուն օդային ովկիանոսին որ երկրագունտս ամեն դիէն կը պատէ, հինգերորդ մասը կը բաղկացընէ: Անոր մէջը աղատ է, ինքն իրեն առանձին է, եթէ այդպէս կընամ ինքինքս հասկը-

ցընել . կաղի վիճակի մէջ է , այսինքն թէ տեսութեան տակ չինար , թէպէտ և դիւրին ըլլայ ստուգել թէ իրապէս հոն կայ , բաւական է որ եղանակը գիտնայ մէկը :

Ծովուն խորերը իջիր : Կան մարդիկ որ անոր խորութիւնը միջին հաշուով մէկ փարասախ համարելու արդար կը սեպեն , որ հազարագրամով գեղեցիկ հաշիւ մը կու տայ ընդհանուր ծովուն ծանրութեանը , եթէ մէկը ուղենայ դիտել համատարած աշխարհացուցին վը լայ անոր գրաւած միջոցը : Մէկ դի կը ձգեմ լճերը , գետերը , առուակները , ամազոց ջրերը , ցամաքին խորերը և անոր երեսը ասդիս անզին ցրուած ջուրը , թողում ըսել դեռ ուրիշ շատ ջրեր :

Թթուածինը՝ այս գրեթէ անհաշուելի զանգուածին ութը իններորդը կը կազմէ : Ութը իններորդը , աղէկ մըտիկ ըրէ , որ ըսել է գրեթէ ամբողջը , որովհետեւ իննը լիտը ջրի մէջ ուժ լիտը թթուածին կայ : Մնացորդը կազմողը ուրիշ մարմին մըն է , որուն վրայ հիմա պիտի խօսինք , որ և կ'ըսուի ջրածին :

Ոտիցդ ներքեր կոխած հողը՝ թթուածնով հոծ է : Որչափ մինչև հիմա կրցեր են երկրագնտիս խորերը իջնալ , ամեն դին գտեր են զայն հազար ու մէկ եղանակաւ ծածկուած , շատ մարմնոց հետ միացած , որոնք առանց իրեն գոյութիւն ունենալ կարող չեն , հազարումէկ բաղկացութեան մէջ բանտարկուած , միշտ պատրաստ իր բնական վիճակով երևան գալու , եթէ իր բանտը կործանուելու ըլլայ : Երկրիս բոլոր մակերևոյթը՝ դաշտավայրը , լերինք , քաղաքք , անապատք , մշակեալ դաշտորէք , այն ամեն որ կընաս տեսնալ , եթէ պայծառ երկինքով մը կարենայիր օդապարկով մը բաւական վեր ելլել՝ որ մէկ հայեցուածքով երկրագունտը տեսնաս , այս ամենը ուրեմն կարելի է համարել իրը թթուածնի անհուն ընդունարան մը , ուսկից իրը հսկայած կոհակ կընար խոյս տալ , եթէ գերմարդ կային բնալցոյն մը ուղենար մեր խեղ

պղտի գունտը քիմիական գալարափողի մը մէջ դնել , նման անսոնց զոր մեր բնալցոյն թէ գործ կ'ածեն : Քեզի օրինակ մը տալու համար , բարիզու տանց քարերը , որոնց մէջ արդէն ածուխ գտանք , զրեթէ կիսով չափ թթուածնով շինածեն : 100 լիտր կշռող քարի մը մէջ , 48 լիտր թթուածին կայ , և որ բնալցոյն ըլլայ որ կարենայ ճարպկութեամբ վարիլ , կընայ զանոնք երբ ուղէ դուրս հանել :

Ետքի անգամուն քեզի բոլոր այն մարմինները կը զուրցէի որոնց մէջ ածուխ կը գտնուի , սակայն այս անգամուս ցուցակ մը շինելը մէկդի դնելուէ . վասն զի բոլոր բառգիրքն հարկ պիտոր ըլլայ մէջը անցնիլ : Շօշափէ բոլոր այն բաները որ սենեկիդ մէջ , տանդ մէջ , և ամեն տեղ ուր երթալու ըլլաս , ձեռքիդ տակը կ'իյնան . եթէ մետաղները մէկդի առնունք , անկարելի է որ ձեռքդ անանկ մարմին մը չօշափէ որ թթուածնով հոծ չըլլայ : Նաև քու մարմինդ իսկ , եթէ բոլոր բովանդակած թթուածինը մէջէն վերցընէին , անանկ ոչինչ բան մը կը դառնար՝ որ դու ալ կը զարմանայիր :

Երբ քեզի կ'ըսէի թէ թթուածինը աշխարհիս թագաւորն է , չափազանց բան մը չէի ըսեր , անանկ չէ : Անոր համար ալ , խօսքը մէջերնիս մնայ , մեծ թշուառութիւն մըն է այն տղիտութիւնը որուն մէջ մարդ հաճեալ է ապրելու այս տիեզերական մարմնոյսնկատմամբ . որ ամեն բանի մէջ կայ , ամեն դին կը գտնուի , որուն հետ միշտ վերաբերութիւն ունինք՝ մեր էութեանը ամեն վայրկեանին . որ կերպով մը մեր անձն է , վասն զի մեր մարմնոյն երեք քառորդէն աւելին իրմով շինուած է , և որուն անունը եթէ ընկերութեան մը մէջ զուրցուի , վատահ եմ որ շատ մը պղտի աղջկանց բերանը ծռմռտկելու պատճառպիտոր տայ իրաւցընէ ասանկ է : Կան օրիորդք որ իրենց պարծանք մը կը սեպեն գիտնալ թէ ինչ է փարամոնա , մինչդեռ նախատինք կը սեպեն գիտնալ թէ ինչ բան է թթուա-

**Ճինը :** Պայման մը սեպուած է որ կանայք այդ բաները չգիտնան պիտոր, հաւանականաբար անորհամար ինչպէսթէ տըղայք շնչէին, որով և իրենք անոր վրայ հսկելու պարտք մը չունենային:

**Այս** բանս ինձի կը յիշեցընէ որ շնչառութիւնը մեկնելու վրայ ենք, վասն զի մինչդեռ ես կը վերցընէի քեզի այն առաջաստին մէկ ծայրը՝ որուն ետեր բնութիւնը իր լաւագոյն գաղտնիքները տգէտներէն կը ծածկէ, դրեթէ մոռցեր էի զայն:

Թթուածին է ուրեմն որ արիւնը՝ թոքոց սենեակներուն մէջ օգուն հետ որ կը տեսաւորի՝ յաղթանակաբար անկէ կ'առնու. և, առանձին խօսք մ'ընելով, այս թթուածին շնորհքովն է որ արիւնը թոքերէն սիրտը կը դառնայ, և յետոյ սրտէն գործարանները. այն գեղեցիկ կարմիր վարդագոյն երանգը բերելով՝ որով շնչերակային արիւնը երակային արիւնէն կը գանազանի:

**Արդ** արիւնը, իւրաքանչիւր ճամբորդութեան՝ այս թթուածինը կը վասնէ, և իր թոքերէն գործարանները, և գործարաններէն թոքերը, յարատե ընթացք ընելու էական վախճանը, այս ազնիւ պաշարը անդադար նորոգելն է, որ շարունակ կը վասնի:

Ի՞նչ բանի կը ծառայէ: **Արդեզ** արիւնը մեր գործարանաց մէջ կը թողուզայն, և այս այն նիւթերէն մէկն է արդեզք՝ որ մեր վերակեցուն անդադար ինամք ունի հոգալու մարմնոյն այն պղտի գործաւորներուն, որ իրենց շէնքերուն գործածեն պիտի:

**Ոչ,** սիրելի օրիորդ: **Այն** առածը, թէ ժամանակին օդովը չսնանիր մարդ, բոլորովին արդար է, թէպէտ և առանց օդու ապրիլ անկարելի է: Օդը մեր գործարանները չմնուցաներ. ընդհակառակն զանոնք կ'ուտէ, և այն որ մենք կ'ուտենք հետզհետէ անոր անյագ ախորժակը յազեցընելու կը ծառայէ: Երբ այս կամայն պատճառի համար ուտելէ կը դադրինք, ինքը միշտ ուտելու կը շարունակէ, և այս բանիս համար է որ այն մարդիկ որ անօթու-

թենէ կը մեռնին՝ այնպէս նիհար կ'ըլլան: Օդը ներսէն կերած է զիրենք:

**Ատոր** չէիր սպասեր. սակայն հիմա պատրաստուէ զարմանքէ զարմանք քալերու: Եւ սկիզբ մը տալու համար, հարկ է որ հոս կանկ առնում, և դեռ առաջ չգացած, քեզի մեկնեմ, երեսկայէ ինչ...: Կրակը:

Շատ վերաբերութիւն չկայ, պիտոր ըսես, կրակին և շնչառութեան մէջ:

Շատ աղէկ, ահա ատոր վրայ կը խարուիս: Բոլորովին մի և նոյն բանն է: Յաջորդ անգամուն քեզի այդ բանը կը ցուցընեմ:

Կը շարունակոի:

### ՏՈՒՎԱՐԻ ԵՒ ՔԱԼԵՒԻ

ՎՐԱՑԻՆ ԶԴՈՒԵԼԻ ԿԱՄՐՁԽԻ ՑԱՏԱԿԱԴԻՆ ՊԱՏԿԵՐԸ

(ՏԵՍ ԷՐԵՍ 8-9)

Անցած տարուան բազմավիպին 23+ իջին մէջ Տուվրի և Քալէի մէջ աեղձգուելի կամրջին առաջարկութեանը վրայ խօսելով, դրինք նաև մասամբ մը կամրջին պատկերը, ինչպէս որ մոտածեր է զայն Պ. Պունդէ ճարտարապետը: Հիմա այս թերթովս անոր այլ և այլ մասանց յատակագիծ պատկերը կը ներկայացընենք:

1. Պատկերը կամրջին բոլոր ընդառձակութիւնը կը ներկայացընէ, որ տասը հատ ցցապատներէ կը բազկանայ, որոնց իւրաքանչիւրը 300 մեդր երկայնութիւն ունի: **Այս** ցցապատներու ամեն մէկը հինգ ուղղահայեաց վանդակներէ ձևացած է, որոնք երկըթի ամուր ձողերով մէկմէկու հետ կապած են: Ինչպէս ըսած ենք արդէն, կամուրջը գաղղիոյ դին՝ Պլան-Նէ հրուանդանին վրայ կը հանգչի, և Անգղիոյ դին Շեքսբիրի ժայռին վրայ: Կ'ուզենք նաև յիշեցընել որ այս երկու բարձրաւանդակաց մէջի հեռաւորութիւնը, հանդերձ երկու կողմի զառիվայրներովը որ 300 մեդրի չափ կան, 29,700 մեդր է:

2<sup>ր</sup>. Պատկերը կամրջին ցցապատնե-